



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

338.98

4-82

17 FEB 2010

Am-935

Վ. ԿՈՒՅԲԻՇԵՎ

1931 թ.

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՐՁԱԿՄԱՆ ՊԼԱՆԸ

113/33 2
AK

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ, ՄՈՍԿՎԱ, 1931

Арм. 2-3036a Ам-935

2-3036a

Կ. ԿՈՒՑԲԻՇԵԿ

807

338.98
Կ-802

1931 թ.

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՐՁԱԿՄԱՆ
Պ Լ Ա Ն Ը

Г.П.Б на обяэ. экз.
Литр 1931 год
Акт № 7/205

ԽՍՀՄ ԺՈՂՈՎ. ԿԵՆՏՐՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1931

ИНВ. № 21534

Քարգմ. Վ. Ի.



39493-63

ՄԵՆՔ ԳԵՐԱԿԱՏԱՐԵԼ ԵՆՔ ՀՆԳԱ- ՄՅԱԿԻ ՆԱԽԱԳԾՈՒՄՆԵՐԸ

Մեր Միության ժողովրդական տնտեսու-
թյունը կանգնած է նոր տնտեսական տար-
վա—1931 թվի շեմերին: Ինչպես պետք է
լինի այս հարձակվող տարվա ժողովրդական
տնտեսության պլանի նյութական բովան-
դակությունը, ինչպիսին է մեր առաջ կանգ-
նած առաջադրությունների ծավալը: Ինչ-
պես պետք է արտացոլեն այդ պլանում
կուսակցության հիմնական ղեկավարները
սոցիալիստական շինարարության գործում:
Պատասխանել այդ հարցերին չի կարելի,
յեթե, թեկուզ ամենաընդհանուր գծերով,
չտանք հնգամյակի առաջին յերկու տարվա
հանրագումարները, յեթե չվերլուծենք այդ

ժամանակամիջոցում մեր ունեցած հաջողու-
թյունները և անհաջողությունները, նվաճում-
ները և թերությունները: Ինչպես հայտնի յե
1929 — 30 թվի կոնսուլո թվերը մի շարք
առանձին բնագավառներում չեն կատարված:
Այդ փաստն օգտագործեցին մեր թշնամի-
ները, վորոնք հարահրոց եյին բարձրացրել
«հնգամյակի վիժման» մասին, իբր թե նա-
խորք արդեն անհաջողության մատնված
«բոլշևիկյան եքսպերիմենտի» «անփառու-
նակ» վերջի մասին: Դա այդպես է, թե՞
վոչ: Արդյոք ճիշտ է, վոր 1929 — 30 թ.
տարեկան պլանի թերակատարումը նշանա-
կում է «հնգամյակի վիժում»: Դատարկ
խոսքեր: Մենք թե քաղատարել ենք
տարեկան պլանի առաջադրությունը, վորը
համեմատած հնգամյա պլանի հետ զգալի
չափով բարձրացրած է, բայց գերակա-
տարել ենք հնգամյա պլանի նա-
խագծումները: Յեվ դրանում հեշտ է
համոզվել, յեթե համեմատենք հնգամյա

պլանի առաջադրությունները նրա փաստա-
կան կատարման հետ:

Համայնացված տնտեսության բոլոր բնա-
գավառներում այս տարիների ընթացքում
մենք շարժվել ենք այնպիսի տեմպերով,
վորոնք զգալի չափով բարձր են խորհուրդ-
ների Համագումարի ընդունած հնգամյա
պլանի նախագծումներից:

Վերցնենք կապիտալ ներդրումները: Յեն-
թադրվում էր հնգամյակի առաջին յերկու
տարում պլանի յենթարկված արդյունաբե-
րության հիմնական ֆոնդերում ներդնել
3.990 միլիոն ռուբլի, իսկ փաստորեն ներ-
դրված է 4.605 միլ. ռուբլի, կամ 15,4%-ով
ավելի, քան նախագծված էր հնգամյակով:
Գյուղատնտեսության հիմնական ֆոնդերում
յենթադրվում էր ներդնել 1.719 միլիոն,
իսկ ներդրված է 2.997 միլիոն, կամ հնգա-
մյակի նախագծումներից 139,4%-ով ավելի:
Տրանսպորտի հիմնական ֆոնդերում յենթա-
դրվում էր ներդնել 2.504 միլիոն, ներդր-

ված և 2.688 միլիոն, իսկ ընդամենը ժող-
տնտեսության համայնացված օեկտորում
12.653 միլիոն ռուբլու փոխարեն ներդրված
և 13.762 միլիոն ռուբլի:

Սևանաձևապես նշանակելի յե՝ համեմա-
տած հնգամյակի յենթադրությունների հետ,
ներդրումների աճումը արդյունաբերության
մեջ: Անցյալ յերկու տարվա ընթացքում
արդյունաբարությունը, հնգամյակի նախա-
դժվածի համաձայն, պետք է տար 29.337
միլ. ռ. ընդհանուր պրոդուկցիա, իսկ փա-
տորեն նա սովել է 30.456 միլիոն ռուբլու
պրոդուկցիա: Հատկապես նշանակելի յեր
հնգամյա պլանի նախադժվածներից ավելին
կատարելը ծանր արդյունաբերության ճյու-
ղերում: Հնգամյակի յերկու տարվա ընթաց-
քում արդյունաբերության այդ ճյուղերը
12.476 միլ. ռ. փոխարեն սովել են 13.764
միլիոն ռուբլու պրոդուկցիա, այսինքն 1.300
միլիոն ռուբլով ավելի:

ՀՆԳԱՄԵՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՅԵՐԿՈՒ ՏԱՐԻՄ
(1928/29 — 1929/30 թ.թ.)

Ցուցանիշները	Չափելու միա- յուրը	Բացարձակ մեծություն		Կատարված և պլանի տեղ. %
		նշված և հնգամյա պլանով	կատարվ- ած և պլանով	
1. Կապիտալ ներդրումները հա- մայնացված օեկտորի հիմնա- կան ֆոնդերում (համապա- տասխան տարիների գներով)	միլ. ռ.	12.653	13.762	108,8
»	»	3.990	4.605	115,4
նույն } պլան. արդյուն. մեջ թվում } գյուղատնտես. մեջ	»	1.719	2.397	139,4
»	»	2.504	2.688	107,3
2. Պլան. արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիան (ներառյալ և մանդի) 1926— 27 թ. գներով	»	29.337	30.456	103,8
նույն } «Ա» գրուպպա	»	12.476	13.764	110,3
թվում } «Բ» »	»	16.861	16.692	99,0
3. Ցանքադաշտը (ամբողջը)	միլ. հ.	239,0	245,8	102,8
»	»	196,3	198,0	100,9
նույն } հատիկային	»	2,0	2,6	130,0
թվում } բամբակի	»	1,7	1,8	105,9
»	»	1,7	1,8	105,9
4. Հատիկ. ապրանքային պրո- դուկցիան	միլ. ցենտ.	221,2	267,3	120,8
5. Ցեղիթ. գծ. բեռնաշրջանա- ռությունը	միլ. տոնն	350,9	409,2	116,6
6. Ճանապարհորդների փոխա- դրում յերկթ. գծով	միլ. պատ. կիլ.	51,5	77,1	149,7

Արդյունաբերության առանձին կարևորագույն ճյուղերի գծով ունենը հնգամյա պլանի

Ճյուղերի անունները		նշված է հնգամյա պլանով	հատար- ված է	հատարված է 2 տարվա ընթացքում %-ն հետո
Քարածխի հանույթը . . .	միլ. տոնն	87,7	84,2	96,0
Նավթի »	»	28,0	30,6	109,3
Չուգունի ձուլում	»	9,1	9,0	98,9
Պողպատի »	»	9,9	10,3	104,0
Պրովատ	»	7,6	8,3	109,2
Նրբեկտրոսեխիկայի պրո- դուկցիա	միլ. ո.	588	786	138,8
Գյուղատնտ. մեքենաշինա- բարույթ. պրոդուկցիա . .	»	472	515	109,2
Տրակտոր. արտադրություն	հազ. հատ	8,0	12,6	157,5
Սուպերֆոսֆատի »	հազ. տոնն	741	559	74,5
Ցեմենտի »	միլ. տակառ.	33,5	33,8	100,8
Բամբակեղեն գործվ. »	միլ. մետր	6.236	5.236	84,0
Չրեղեն կտորի	մ. քառ.	229,4	239,7	104,5
Վուշի կտորի	»	379	385	101,6

նախագծումների կատարման հետևյալ պատկերը:

Հնգամյակի առաջին յերկու տարիներում նշանակալի հաջողություններ ունեցանք նաև գյուղատնտեսության բնագավառում: 1929 — 30 թ. ցանքսերի տարածությունը աճել է 10 միլ. հեկտարով—118 միլ. հեկտարից 1928 — 29 թվին մինչև 127,8 միլ. հեկտար 1929 — 30 թ.: Հատկապես նշանակալի յեն տեխնիկական մշակույթների տարածության աճման տեմպերը (բամբակ, շաքարի ճակնդեղ և այլն): Զգալիորեն աճել է և գյուղատնտեսական պրոդուկցիան:

**ՆԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏԵՄՊԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՁ**

Վորտեղ են այն պատճառները և արմատը, վորոնք պայմանավորում են գյուղատնտեսության զարգացման այդքան նշանակալի տեմպերը: Հասկանալ այդ փաստը

մենք կկարողանանք, յեթե ուշադրութեամբ դիտենք այն պրոցեսները, վորոնք տեղի յեն ունեցել գյուղում, այն սոցիալական առաջխաղացումները, վորոնք հիմնական կերպով փոխել են մեր գյուղի դեմքը և վորոնք հնարավորութիւն են տվել նոր ձեւով դնել գյուղատնտեսութեան զարգացման տեմպերի ամբողջ պրոբլեմը: Վորովհետեւ գյուղում տեղի ունեցած այդ սոցիալատնտեսական առաջխաղացումների, կոլխոգսովխոգային շինարարութեան հաջող ընթացքի հիման վրա յեր միայն, վոր մենք կարող եյինք հասնել այն խոշորագույն հաջողութեան, վորի շնորհիւ հնգամյակի արդէն առաջին յերկու տարում մենք կարողացանք հիմնականում լուծել գյուղատնտեսութեան առաջ կանգնած պրոբլեմներէնց ամենադժվարին և ամենաբարդ պրոբլեմը— հացահատիկային պրոբլեմը:

Կոլխոգային շինարարութեան աճումը շատ և շատ ե գերազանցել հնգամյա պլանի բո-

լոր նախագծումները: Առ 1-ն գեկտեմբերի 1930 թ. մենք ունեյինք կոլեկտիվացված, յեթե վերցնենք գյուղատնտեսութեան բոլոր ճյուղերը, վեց միլիոն գյուղացիական տնտեսութիւնից ավել, համարյա մի չորրորդը, իսկ հացահատիկային գլխավոր շրջաններում կոլեկտիվացված գյուղացիական տնտեսութիւնների տոկոսն ավելի բարձր եր: Այնտեղ ունեյինք համարյա 50% կոլեկտիվացված տնտեսութիւններ: Իսկ այն տարածութիւնը, վորը բռնում են կոլխոգների ցանքսերը (յեթե հաշվենք 1930 թվի գարնան և աշնան տվյալներով) հասել ե 43 միլիոն հեկտարի, մինչդեռ հնգամյա պլանով, նրա վերջին տարվա համար, նախագծվում եր կոլխոգների ցանքսադաշտերի տարածութիւնը հասցնել մինչև 20 միլիոն հեկտ.: Այլ կերպ ասած, հնգամյակի հենց առաջին իսկ յերկու տարում յերկու անգամով գերազանցվել են հնգամյակի նախագծումները կոլեկտիվացման բնագավառում:

Սրանից հետո բացի ծիծաղից ել ի՞նչ կարող են առաջ բերել «Սոցիալիստիչեսկիյ Վեստնիկ»-ի ասածները, մի թերթ, վորը Դոմանեվսկու բերանով պնդում ե, թե «միայն սանձարձակ ֆանտազիայի թռիչքով կարելի յե բացատրել այն հաշիվը, վորի համաձայն հնգամյակի վերջում ապրանքային հացի 40%-ը ստացվելու յե կոլխոզներից ու սովխոզներից»:

«Միայն սանձարձակ ֆանտազիայի թռիչքով»: Այնինչ արդեն անցյալ տարվա բերքից ապրանքային հացի կեսից ավելին ստացել ենք համայնացված սեկտորից: Գյուղատնտեսության զարգացման այդ գլխավոր և կարևորագույն հետևանքը, հնգամյակի առաջին յերկու տարվա պատկերը գծելիս, պետք ե առանձին կերպով մատնանշվի և ընդգծվի:

ՄԵԶ ՄՈՏ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ

Ժողովրդական տնտեսության բնագավառում ձեռք բերած այդ հաջողություններն

ուղեկցվել են բանվոր դասակարգի նյութական և կուլտուրական դրուժյան բարելավման նշանակալի աճամբ: Զգալի չափով աճել ե բանվոր դասակարգի քանակը: Միայն 1930 թվի ընթացքում արդյունաբերության մեջ ե մտել 500.000 մարդ: Իսկ բանվոր դասակարգի ընդհանուր թիվը, հաշվելով և գյուղատնտեսական բանվորները, 1930 թ. աճել ե ավելի քան 1,8 միլիոնով:

Այս յերկու տարվա ընթացքում աշխատավարձն աճել ե 12%-ով: Աճել են բանվորների նյութական դրուժյան վրա ազդող և այլ պայմանները: Սոցապի բյուջեն 1930 թ. հասել ե 1.600 միլ. ռուբլու:

Ուժեղ աճել են անվտանգության տեխնիկայի համար բաց թողնված գումարները: Ավելացել են բանվորների կենցաղի բարելավման ֆոնդի համար արած մասնահանումները:

Յոթժամյա բանվորական օրը 1930 թ. վերջում ընդգրկել եր արդյունաբերության մեջ բոլոր զբաղված բանվորների արդեն 45,5%-ը:

Արտադրական անընդհատ շաբաթն ընդգրկել է արդյունաբերության մեջ զբաղված բոլոր բանվորների 67%-ը: Այս բոլորի հետևանքով անցյալ տարի մենք ահանառեմենք յեղանք աշխատի մի յերևույթի, վորն ունի պատմական խոշոր կարևորություն և բնորոշ է տնտեսության մեր սոցիալիստական սխտեմին,—և վորը չի կարող տեղի ունենալ կապիտալիզմի որոք,—դա գործազրկության վերացումն է հիմնականում: Մեզ մոտ գործազրկություն չկա: Դեռ ավելին. ժողովրդական տնտեսության շատ և շատ ճյուղերում մեզ մոտ բանվորների սակասություն կա: Դա աշխատի մի յերևույթ է, վորն իր վրա յե բևեռում ամբողջ աշխարհի տնտեսագետների ուշադրությունը:

ՀԱՄԱՅՆԱՑՎԱԾ ՍԵԿՏՈՐՆ ՍՏԱՑԵԼ Ե ԲԱՑԱՐՁԱԿ ԳԵՐԱԿՇԻՌ

Վերջապես, մեզ հաջողվել է հասնել խոշորագույն նվաճումների մեր զարգացման նաև կարևորագույն ցուցանիշի գծով, վորը բնութագրում է մեր զարգացման սոցիալիստական վորակը—համայնացված, սոցիալիստական սեկտորի աճման գծով: Հնգամյակի առաջին յերկու տարվա արդյունքները տալիս են աշխատի պատկեր. ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերը մինչև 1928—29 թ. մոտավորապես հավասար կերպով եյին բաժանվում համայնացված և չհամայնացված սեկտորների միջև: 1928—29 թվին համայնացված սեկտորի տեսակարար կշիռը հիմնական ֆոնդերում արդեն կազմում էր 57,5%, իսկ 1929—30 թ. բարձրանում է մինչև 62%: Այլ կերպ ասած, ժողտնտեսության հիմնական ֆոնդերում համայնացված սեկտորն ստանում է

ՄԵՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սակայն, տալով հանրագումարները, չի կարելի, իհարկե, չասել մի ամբողջ շարք տեղական մասնակի թերությունների և պակասությունների մասին, վոր ունեցել ենք սոցիալիստական շինարարության մեր ֆրոնտում: Այնուամենայնիվ պետք է հաստատել, վոր 1929—30 թվի համար տված առաջադրությունը մի շարք կարևորագույն բնագավառներում չի կենսագործված.— ԺՏԴԽ-ի արդյունաբերության պրոդուկցիան աճել է վոչ թե 32%-ով, ինչպես նշված էր պլանով, այլ 25%-ով: Տեմպը վիթխարի յե և վոչ մի յերկրի համար չտեսնված, դա այնպիսի տեմպ է, վորի մասին կապիտալիզմը յերագել անգամ չի կարող, բայց այնուամենայնիվ առաջադրություն չի իրականացված: Ինքնարժեքը 11%-ի փոխարեն իջել է ընդամենը 7%-ով, մի հանգամանք, վոր զգալի հարված է հասցնում ժողովրդական

բացարձակ գերակշիռ: Բավական նշանակալից են համայնացված սեկտորի նվաճումները գյուղատնտեսության մեջ: Յեթե 1928—29 թ. գյուղատնտեսության համայնացված սեկտորը տալիս էր գյուղատնտեսության պրոդուկցիայի միայն 3,7%-ը, ապա 1929—30 թ. համայնացված սեկտորն արդեն տվեց գյուղատնտեսության ամբողջ պրոդուկցիայի 23,5%-ը:

Համայնացված սեկտորի տեսակարար կշիռը արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիայում կազմում էր՝ 1928—29 թ.— 89,7%, 1929—30 թ.— 94,5%: Այսպիսով, այս յերկու տարվա ընթացքում տեղի յեն ունեցել խոշոր առաջխաղացումներ դեպի սոցիալիզմ, առաջխաղացումներ, վորոնք ապահովեցին սոցիալիստական սեկտորի բացարձակ գերակշռումը ժողովրդական տնտեսության մեջ: Հենց դրանով էլ մենք արդեն թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը:



ՄԵՐ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

39493-67

Սակայն, տալով հանրագումարները, չի կարելի, իհարկե, չասել մի ամբողջ շարք տեղական մասնակի թերությունների և պակասությունների մասին, վոր ունեցել ենք սոցիալիստական շինարարության մեր ֆրոնտում: Այնուամենայնիվ պետք է հաստատել, վոր 1929—30 թվի համար տված առաջադրությունը մի շարք կարևորագույն քնազավառներում չի կենսագործված.— ԺՏԳԽ-ի արդյունաբերության պրոդուկցիան աճել է վոչ թե 32%-ով, ինչպես նշված էր պլանով, այլ 25%-ով: Տեմպը վիթխարի յե և վոչ մի յերկրի համար չտեսնված, դա այնպիսի տեմպ է, վորի մասին կապիտալիզմը յերագել անգամ չի կարող, բայց այնուամենայնիվ առաջադրություն չի իրականացված: Խնքնարժեքը 11%-ի փոխարեն իջել է ընդամենը 7%-ով, մի հանգամանք, վոր զգալի հարված է հասցնում Ժողովրդական



բացարձակ գերակշիռ, Բավական նշանակալից են համայնացված սեկտորի նվաճումները գյուղատնտեսության մեջ: Յեթե 1928—29 թ. գյուղատնտեսության համայնացված սեկտորը տալիս էր գյուղատնտեսության պրոդուկցիայի միայն 3,7%-ը, ապա 1929—30 թ. համայնացված սեկտորն արդեն տվեց գյուղատնտեսության ամբողջ պրոդուկցիայի 23,5%-ը:

Համայնացված սեկտորի տեսակարար կշիռը արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիայում կազմում էր՝ 1928—29 թ.— 89,7%, 1929—30 թ.— 94,5%: Այսպիսով, այս յերկու տարվա ընթացքում տեղի յեն ունեցել խոշոր առաջնագացումներ դեպի սոցիալիզմ, առաջնագացումներ, վորոնք ապահովեցին սոցիալիստական սեկտորի բացարձակ գերակշռումը Ժողովրդական տնտեսության մեջ: Հենց դրանով էլ մենք արդեն թևակոխել ենք սոցիալիզմի շրջանը:

ամբողջ տնտեսություն: Պրոդուկցիայի վորակն առաջվա նման մնում է շատ ցածր: Հիմնական (կապիտալ) շինարարությունը չի կատարված այն չափերով, վորոնք սահմանված էին արդյունաբերություն և ժողտնտեսություն այլ սեկտորների համար: Պետք է հաստատել, վոր այդ յերկու տարիները բնութագրական են մատակարարման վատ կազմակերպմամբ: Մատակարարման կազմակերպումը դրված էր վերին աստիճանի վատ: Վորոշ ճեղքվածքներ մենք ունեցանք և ֆինանսների բնագավառում: Դա հետևանք էր նրա, վոր ինքնարժեքի իջեցման պլանները չեյին կատարված, վոր գյուղատնտեսությունը զգալի չափով շատ էր ֆինանսավորված, վոր մեր տնտեսական որջանների աշխատանքում տեղի ունեյին ֆինանսական դիսբալանսի բացակայություն և «շորթելու» ձգում:

Հատկապես պետք է կանգ առնել անցյալ տարվա արտադրության մեջ յեղած ճեղք-

վածքների վրա: Դա, ամենից առաջ, ածուխը և մետաղն են: Դրա վրա պետք է կենտրոնացնել մեր ուշադրությունը, վորովհետև յեթե այստեղ առաջնադասում չլինի, յեթե այստեղ վճռական շրջադարձ չլինի, ապա 1931 թվի վողջ պլանը կդրվի չկատարման սպառնալիքի տակ: 1931 թվի պլանի կատարումով մենք կապահովենք կուսակցության լոգունդի իրականացումը — «Հնգամյակը չորս տարում»:

1930 ԹԻՎԸ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Մեր այս հաջողությունների լույսի տակ անհետաքրքրական չէ թեկուզ համառոտ կերպով կանգ առնել նրա վրա, թե այդ շրջանում ինչ էր կատարվել մեր Միություն սահմաններից դուրս, կապիտալիստական յերկրներում:

Անգլիայում արդյունաբերության պրոդուկցիան 1930 թվի վերջին 9 ամսում բնկել է 8,4%-ով՝ համեմատած 1929 թվի

համապատասխան շրջանի հետ: Գերմանիայում այդ ինն ամսվա ընթացքում պրոդուկցիան ընկել է $13^0/_{10}$ -ով՝ համեմատած

1930 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹ. ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ
ԻՆԴԵՔՍՆԵՐԸ (1913 թ. = 100)

	Ցանցադաշտեր			Ընդհանուր բերքը		
	Բոլոր* յերկրները	Յեվրոպան	ԽՍՀՄ	Բոլոր* յերկրները	Յեվրոպան	ԽՍՀՄ
Ճորեն	118	97	113	126	95	143
Հաճար	98	91	116	93	90	126
Դարի	117	99	71	113	95	78
Վարսակ	104	85	107	104	85	117
Ցեզիտացորեն	98	108	297	79	79	340
Բամբակ	123	—	246	112,3	—	215
Շաքարի ճակնդեղ	133	127	168	118	106	160

* Առանց ԽՍՀՄ-յան:

1929 թվի ինն ամսվա հետ: Միացյալ Նահանգներում պրոդուկցիան ընկել է $17,8^0/_{10}$ -ով՝ 1929 թ. համապատասխան ամիսների դիմաց, Լեհաստանում — $18^0/_{10}$:

Յեթե վերցնենք անգամ գյուղատնտեսական արտադրությունը, վորը վորոշ չափով ավելի դանդաղ է յենթարկվում ներկայումս տեղի ունեցող ճգնաժամին, ապա այստեղ ևս պատկերն այնպես է, վոր Յեվրոպան, համեմատած 1913 թվի հետ, կրճատել է իր և՛ ցանքսադաշտերը, և՛ ընդհանուր բերքահավաքը:

Մի կողմից, մեր հաջողությունների հանդեպ, մյուս կողմից, այն կրիզիսի, վորն այժմ տեղի յե ունենում կապիտալիստական յերկրներում, թշնամի բուրժուական աստեղագետների՝ մեր շինարարության նկատմամբ ունեցած վերաբերմունքի մեջ յերևան է յեկել նոր եյական վերաբերմունք: Առաջ նրանք ձեռ եյին առնում, ծաղրում եյին, արհամարում. — հնգամյակը, պնդում եյին

նրանք, դա «անմիտ բանե», «ֆանտազիայե»: Հնգամյակը հարկավոր ե բոլշևիկներին միայն նրա համար, վորպեսզի փոխառություն ստանան: Այժմ այդ ծաղրը փոխվել ե վախի:

«Նեյե Յրեյե Պրեսս»-ում հրատարակված հոդվածում անգլիական կառավարության նախկին պրեմյեր-մինիստր Լլոյդ-Ջորջը, որինակ, գրում ե.

«Կոմունիստական առաջնորդներն սկսել են իրականացնել այնպիսի մի պլան, վորն իր ծավալով ե նշանակությամբ գերազանցում ե բոլորը, ինչ իմացել ե պատմությունը մեծ ե համարձակ ձեռնարկումների բնագավառում: Մեծն Պետրոսի պրոեկտները համեմատած Ստալինի պլանների հետ վողորմելի յեն իրենց չնչինությամբ: Ստալինը հանձն ե առնում ամենաթամանակակից ֆաբրիկներով, մեքենաներով ե արտադրության միջոցներով սարքավորել Ռուսաստանը, վորն ավելի մեծ ե ամբողջ Յեվ-

րոպայից ե վորը միաժամանակ յեվրոպական բոլոր յերկրներից ավելի վատ ե կազմակերպված: Ամբողջ գյուղատնտեսությունն այդ վիթխարի յերկրի, վորտեղ տիրում ե տնտեսավարության ամենահետամնաց յեղանակը, պետք ե մեքենայացվի:

«Հանքեր, ֆաբրիկներ, տեքստիլ ձեռնարկություններ արդեն ծնունդ են առել:

«Այժմ ամբողջ գործը գյուղատնտեսությունն ե. Յեթե հաջողվի նվաճումների հասնել ե այստեղ, ապա «Կոմունիզմը կմտնի այն զաղավարների շրջանը, վորոնց իրականալի լինելը ապացուցված ե ե վորոնք այդ պատճառով ել պետք ե լուրջ կերպով ընտենեն ժողտնտեսությունը ե սոցիալ-հետազննական գիտությունը: Հնարավոր ե, վոր դրա մեծագույն հետևանքն լինելու յե այն, վոր այդ դեպքում Ռուսաստանն իր հսկակայական ազգաբնակչությամբ—բոլորը փայլուն ռազմական մատերիալ—դառնալու յե ամենահաբուստ ե դրա հետ մեկտեղ ամե-

նագորեղ յերկրներից մեկը: Ազգերի Լիգայի վսեմափայլ շրջանը բարձրամիտ ծիծաղով մերժեց Ռուսաստանի առաջարկը՝ սկսել բոլոր պետությունների ընդհանուր զինաթափություն: Սակայն, յեթե Ռուսաստանը ներկա դժվարություններից դուրս գա սովորած, ավելի լավ հայթայթանքով և ավելի լավ կազմակերպված յերկիր, ապա ինչպիսի ճակատագրական ձայնով պիտի հնչի այդ ծիծաղը մեր զավակների համար»:

Այստեղ իրոնիայի և ծաղրի հետք անգամ արդեն չկա: Այստեղ կա բուրժուազիայի լակեյի սարսափելի վախ, լակեյի, վորը զգում ե, վոր մեր սոցիալիստական եկոնոմիկայի հաջողությունները — մահ ե ամբողջ աշխարհի բուրժուազիայի և կապիտալիստական իրավակարգի համար:

ԺՈՂՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ 1931 Թ. ՀԱՄԱՐ

1931 թվի համար կազմած տնտեսական պլանը կազմված ե վորպես մեր յերկրի կապիտալիստական տարրերի մնացորդների վրա հետագա լայնածավալ սոցիալիստական հարձակում գործելու պլան, վորպես յերկրի ինդուստրացման տեմպերի հետագա արագացման և սոցիալիստական շինարարության պլան, վորպես աշխատավորության կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացման պլան:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՑԵԿԱՄՈՒՏՐ

	1928 թ.	1929 թ.	1930 թ.	1931 թ.
Միլիոն ուղբինքով (1926/27 թ. դնքով) . . .	26,826	29,917	35,885	49,849
Տոկոսներով, նախընթաց տարվա հանդեպ	—	111,5	119,9	138,9

Մեր տնտեսութեան աճման արագացող տեմպերի ամենաբնորոշ և համայնապարփակ ցուցանիշը հանդիսանում է, անկասկած, ժողովրդական յեկամտի աճման տեմպը:

1931 թ. մենք ունենալու յենք ժողովրդական այնպիսի յեկամուտ, վորը հավասար է լինելու 49 միլիարդ ռուբլու:

Մինչդեռ հնգամյակը միայն վերջին տարվա համար եր նախագծում 49,7 միլիարդ ռուբ. ժողովրդական յեկամուտ: Այլ կերպ ասած, ժողովրդական յեկամտի չափերի գծով հնգամյա պլանի առաջագրությունը կատարվելու յե յերեք տարում: Սակայն ինչն այստեղ հատկապէս կարևոր է, դա այն է, վոր տարեց-տարի ավելանում է ժողովրդական յեկամտի տեմպերի աճումը: 1929 թվին ժողովրդական յեկամուտն աճում է 11⁰/₀-ով, 1930 թվին — 19,9⁰/₀-ով, իսկ 1931 թվին — 38,9⁰/₀-ով:

Ինչ էն նշանակում աճման այս տեմպերը, համեմատած նրա հետ, ինչ ունի կա-

պիտալիզմը: Յարական Ռուսաստանի ժողովրդական յեկամուտը 13 տարվա ընթացքում — 1900 թ. — 1913 թ. — աճել է ընդամենը 39⁰/₀-ով: Իսկ մեզ մոտ ժողովրդական յեկամտի աճման տեմպն այնպես է, վոր մի տարվա մեջ մենք տալիս ենք աճման այնպիսի տոկոս, վորպիսին ցարական Ռուսաստանը կարող եր տալ միայն 13 տարվա ընթացքում:

Միացյալ Նահանգներում ժողովրդական յեկամտի աճումը մի տարում միջին հաշվով կազմել է 3—4 տոկոս, մինչպատերազմյան Գերմանիայում — 2,5—3,5 տոկոս, Անգլիայում — 1,5 տոկոս, Ռուսաստանում — 2,6%: Բոլորովին անհամեմատելի տեմպեր են:

Ինչով բացատրել, վոր 1931 թվին մենք ունենալու յենք ժող. յեկամտի այդպիսի հսկայական աճում: Դա հետևանք է մի ամբողջ շարք տնտեսական ցուցանիշների, վորոնք սահմանվում են ժող. տնտեսութեան առանձին ճյուղերի համար կազմված միան-

գամայն ուսել նյութական-տեխնիկական առաջադրություններին համաձայն:

Ժող. յեկամտի աճման շարունակ արագացող տեմպը—տնտեսության, իսկ առաջին հերթին, արդյունաբերության արտադրումն ե:

Տարեցտարի քանի դնում ավելի և ավելի արագացող տեմպերով աճում ե մեր սոցիալիստական արդյունաբերությունը և 1931 թ. ավելանալու յե 45 տոկոսով, վորը նշանակում ե արտադրության նախապատերազմյան չափի յեռապատկում:

Աճման հենց այդպիսի հարաճուն տեմպերը բնորոշում են և՛ գյուղատնտեսության պրոդուկցիայի աճումը, և՛ բեռնաշրջանառության աճումը և այլն: Մեր աճման «հանգչող կորագծի» թեորիան խղճալի կերպով սնանկացավ: Յեվ հանգչող կորագծի փոխարեն գործնականում մենք ունենք այն, վոր ամբողջ ժողտնտեսության, նրա բոլոր ճյուղերի աճման կորագիծը շեշտակի կերպով վեր ե բարձրանում:

«Հասնել և անցնել» լողունըլը այժմ դառնում ե որվա մարտական և ախտուալ լողունը: Յեվ արդյունաբերության մի ամբողջ շարք ճյուղերում մենք կարող ենք տեսնել, թե գործնականորեն ինչպես ե իրականանում այդ լողունըլը:

Վերցնենք չուգունըլ, Յեթե 1931 թվին մենք ձուլենք 8 միլիոն տոննա չուգուն, ապա մենք կանցնենք Անգլիայի 1929 թվի չուգունի արտադրությունը, յերբ նա հավասար եր 7,700 հազար տոննայի: Այնինչ տակավին 1928 թվին չուգունի ձուլումն Անգլիայում, վոր հավասար եր 7,700 հազ. տոննայի, համարյա յերկու անգամ ավել էր մեր չուգունի ձուլումից, վորն այն ժամանակ կազմում եր 3,300 հազար տոննա: 1931 թվին արտադրելով 8 միլիոն տոննա չուգուն, մենք համարյա յերկու անգամ կանցնենք Բելգիայի չուգունի արտադրությունը, թեև միայն հինգ տարի առաջ

Բեկզիան մեզնից յերկու անգամ ավել
եր արտադրում:

Պողպատի գծով: Յեթե մենք կարողանանք, ինչպես նշված է ծրագրով, 1931 թ. ստանալ 8,800 հազար տոննա պողպատ, ապա կանցնենք 1928 թ. Ֆրանսիայից, չնայած, վոր Ֆրանսիայում պողպատի տարեկան ձուլումը 1927 թվին յերկու անգամ ավել եր իՍՏՄ-յան մեջ կատարված ձուլվածքից:

Համեմատած Բեկզիայի հետ, մենք արտադրելու յենք յերկու անգամ ավելի, չնայած, վոր 1925 թ. նա արտադրում եր մեզնից յերկու անգամ ավելի: Անգլիայի նկատմամբ — այժմ մենք անցնում ենք նրանից, չնայած վոր նա մոտիկ անցյալում երկու անգամ ավել եր պողպատ ձուլում, քան իՍՏՄ:

Ածուխ: 1931 թվի ծրագիրը նախագծում է 83,5 միլիոն տոննա ածուխի հանույթ: Մենք ավելի քան յերեք անգամ անցնում ենք Բեկզիայի 1929 թ. հանույթը,

չնայած վոր 1926 թ. Բեկզիայում ածուխի հանույթը յերկու է կես անգամ ավել եր մերինից, շատ է շատ յետ ենք թողնում Ֆրանսիային, թեև 1926 թվին նրա հանույթը մերինից յերկու անգամից էլ ավել եր:

Բոլոր այդ համեմատություններում բերում էմ կապիտալիստական յերկրների արտադրության մակարդակի այն տարիների ցուցանիշները, վորոնք նախորդում են համաշխարհային տնտեսական կրիզիսի զարգացման: Այդ հանգամանքն էլ ավելի յերնդգծում մեր նվաճումների չափը:

1931 թ. համար նախագծված է արդյունաբերության պրոդուկցիայի աճում 45 տոկոսով, այսինքն արտադրության ավելացում համարյա մեկ ու կես անգամ է արտադրության միայն աճումն ընդհանուր առմամբ հավասար է նախապատերազմյան տարեկան արտադրության. մեկ ու կես անգամ կավելացնենք մեր յերկրի արտադրությունը, վորը ներկայումս նախապատերազ-

մյանից ավել ե յերկու անգամ: Իսկ վորքան տարի հարկավոր կլինե՞ր կապիտալիստական յերկրներին, վորպեսզի նրանք կարողանային մեկ ու կես անգամ ավելացնել իրենց արտադրությունը, յեթե նրանք գնան այնպիսի տեմպերով, ինչպիսինով գնում են այժմ: Միացյալ Նահանգները կկարողանան դա անել, յեթե գնան այն տեմպով, վորով գնում էյին մինչև 1929 թիվը, միայն 7—8 տարվա ընթացքում: Ֆրանսիան—18—20 տարվա ընթացքում: Իսկ մեր սոցիալիստական սիստեմը հնարավորություն ե տալիս մի տարում արտադրությունն ավելացնել 45 տոկոսով:

ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ ԱՎԱՐՏԵԼՈՒ ՏԱՐԻՆ

Այս ե պլանի ծավալը — 49 միլիարդ ժող. յեկամուտ: Այսպես են տեմպերը: Սակայն մեզ, ի հարկե, կարևոր ե վոչ միայն քանակական աճում ընդհանրապես, այլ աճում

գեպի սոցիալիզմ: Ինչ ե իրենից ներկայացնում 1931 թիվը՝ մեր յերկրում սոցիալիզմի աճման տեսակետից:

ԽՍՀՄ ժող. յեկամաի մեջ սոցիալիստական սեկտորի տեսակարար կշիռը աճում և հասնում ե 81,8 տոկոսի, մինչդեռ անցյալ 1930 թվին համայնացված սեկտորը ժող. յեկամուում կազմում եր 74,5 տոկոս: Ժող. տնտեսության հիմնական ֆոնդերում արած կապիտալ ներդրումները ընդհանուր դումարից համայնացված սեկտորի ներդրումները 1930 թվին կազմում էյին 87,5 տոկոս, այդ թվում կոոպերատիվայինը 12,9 տոկոս: 1931 թվին համայնացված սեկտորում կատարվելիք ներդրումների տեսակարար կշիռը կկազմի 92,5 տոկոս, այդ թվում պետական սեկտորում 79,3 տոկոս և կոոպերատիվային սեկտորում 13,2 տոկոս: Հիմնական ֆոնդերի զծով համայնացված սեկտորի տեսակարար կշիռը 1930 թ. 61 տոկոսից բարձրանալու յե մինչև 69,1 տոկոս 1931 թվին:

Համայնացված սեկտորի արդյունաբերության ընդհանուր պրոդուկցիան 1930 թվին կազմում էր 94,7 տոկոս, 1931 թվին կազմելու յե 97,5 տոկոս: Չհամայնացված արդյունաբերությանը մնում է ընդամենը 2,5 տոկոս: Համայնացված սեկտորի գյուղատնտեսության ընդհանուր պրոդուկցիան (և՛ պետական, և՛ կոոպերատիվ) 24,3 տոկոսի (1930 թվին) փոխարեն կազմելու յե 42,9 տոկոս 1931 թվին: Ըստ վորում 42,9 տոկոսը դա միջինն է, յեթե վերցնենք գյուղատնտեսական պրոդուկցիայի բոլոր տեսակները: Յեթե 1931 թվին համայնացված սեկտորը ավեց ընդամենը մոտ մի քառորդը գյուղատնտեսության ամբողջ ապրանքային պրոդուկցիայի, ապա 1931 թվին նա տալու յե 50 տոկոսից ավելին:

Այսպիսով 1931 թիվը հանդիսանալու յե այնպիսի մի տարի, յերբ նշանակալի առաջխաղացումներ են կատարվելու սոցիալիզմի ելեմենտների տեսակարար կշիռը մեր ժող.

տնտեսության բոլոր ճյուղերում ավելացնելու ուղղությամբ և, — վորը մեզ համար առանձնապես կարևոր է, վորը համաշխարհային պատմական նշանակություն ունի, — 1931 թիվը հանդիսանում է սոցիալիստական ելեմենտների՝ գյուղատնտեսության մեջ բացարձակ գերակշիռ ստանալու տարի: Համայնացված սեկտորը գյուղատնտեսության մեջ ունենալու յե բացարձակ գերակշիռ: Դա ինչ է նշանակում: Դա նշանակում է, վոր սոցիալիզմը հաղթանակում է ժողտնտեսության այդ հսկայական մասում. մի բան, վոր սոցիալիզմի կառուցման տեսակետից հանդիսանում էր ամենից ավելի դժվարը: Սոցիալիստական ելեմենտների գերակշռումը գյուղում — դա նշանակում է սոցիալիզմի հիմքի կառուցման ավարտումն մեր յերկրում:

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՒԼ- ՏՈՒՐԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Վերջապես, 1931 թվի պլանի յերրորդ ամենաբնորոշ գիծը աշխատավորների կյանքի նյութական և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացումն է: Դա իր արտահայտությունը գտնում է, ամենից առաջ, յերկրի տնտեսական կյանքի մեջ առնված բանվորների և ծառայողների ընդհանուր թվի աճման մեջ:

1931 թվին շատ լուրջ առաջխաղացում է լինելու և աշխատավարձի բարձրացման գծով: Արդյունաբերական բանվորների աշխատավարձն աճում է 6 տոկոսով, տրանսպորտին — 8 տոկոսով: Ի վերջո աշխատավարձի տարեկան ֆոնդը 12.541 միլ. ռուբլուց հասնելու յե 15.344 միլ. ռուբլու, և կամ աճելանալու յե 22,4%:

Մենք ունենալու յենք բանվորների շահերը սպասարկող վարչության բոլոր ճյուղերի և

որգանների համար բաց թողնվող գումարների հետագա աճում: Կադրերի, կուլտուրայի, սոցիալական ապահովման, առողջապահության վրա 1931 թ. ծախսվելու յե 6,5 միլիարդ ռուբլի հանդեպ անցյալ տարվա 5 միլիարդի: Միանգամայն պարզ է, վոր այդ միջոցների ճնշող մասը գործադրվելու յե բանվորների շահերի սպասարկման համար:

Դրա հետ մեկտեղ սոցիալական ապահովագրման բյուջեն անցյալ տարվա 1.600 միլ. ռուբլու փոխարեն աճելու և հասնելու յե 2.100 միլիոն ռուբլու:

Բնակարանային շինարարության տակավին վերջնապես չհաստատված ծրագրով անցյալ տարվա 480 միլիոն ռուբլու փոխարեն այս տարի ծախսվելու յե մեկ միլիարդ ռուբլի:

Վորպես բանվորների նյութական զրության բարելավման ցուցանիշներից մեկը պետք է մատնանշել տվյալները լայն սպասման ֆոնդի մասին: Արդապրանքներով մատակարարելը 11,5 միլիարդից հասնելու յե

14,6 միլիարդի, այսինքն աճելու յե 26,9 տոկոսով: Մատակարարումը գյուղատնտեսական քննարկում նմանապես աճում է և հետեւանքն այն է լինելու, վոր հատավաճառի շրջանառությունն ավելանալու յե 25 տոկոսով:

Իսկ յեթե վերցնենք բանվոր դասակարգի կուլտուր-կենցաղային դրության այնպիսի մի կարևոր ելմենտը, վորպիսին է 7-ժամյա բանվորական որվա սահմանումը, ապա 1931 թվին մենք խոշոր քայլ ենք անելու դեպի առաջ, վորը զգալի կերպով բարձրացնելու յե բանվորների նյութական և կուլտուրական դրությունը և վորը աալու յե կուլտուրական զարգացման և հասարակական կյանքին ու սոցիալարարությանը մասնակցելու հսկայական հնարավորություններ: 1931 թվին 7-ժամյա բանվորական որվա յեն անցնելու յերկաթգծի ամբողջ բանվորությունը և ԺՏԳԽ կողմից պլանավորվող արդյունաբերության մեջ զբաղված համարյա

ամբողջ պրոլետարիատը, բացառությամբ տեկստիլ արդյունաբերության: Մենքի արդյունաբերության մեջ աշխատող բանվորների զգալի մասը նմանապես անցնելու յե 7-ժամյա բանվորական որվա: Անընդհատ արտադրական շաբաթվա յեն անցնելու համարյա ամբողջ արդյունաբերությունը, վորը պլանավորվում է ԺՏԳԽ կողմից, և տրանս-ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊՐՈԴՈՒԿՑԻԱՅԻ ԱՃՈՒՄԸ (ՄԻԼԻՈՆ ԹՈՒԲԼԻՆԵՐՈՎ)

	1931 թ.	1930 թ.	1931 թ. % - ներք 1930 թ. նկատմամբ
ԺՏԳԽ-ի արդյունաբերությունը . . .	17,551	24,938	142,1
Նույն թվում «Ա» խումբը	10,734	17,000	168,4
Նույն թվում «Բ» »	6,817	7,938	116,4
Մատակարարման ժպ-ի » . . .	3,016	4,737	157,5
Պլանավորվող ամբողջ արդյունաբերությունը	30,567	29,675	145,0

պորտի բոլոր բանվորները: 1931 թիվը լինելու յե այնպիսի մի տարի, վորը պետք ե ավարտի սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը և հենց զբանով մարդկության պատմութան մեջ բացելու յե նոր եջ:

Վերևում արդեն մատնանշվեց, վոր ինչպես ամբողջ ժողտնտեսության, այնպես ել մասնավորապես և առանձնապես արդյունաբերության գծով, 1931 թիվը լինելու յե զարգացման տեմպերի հետագա արագացման տարի:

Ծանր ինդուստրիայի ճյուղերը, 1931 թ. ժողտնտեսության տալով 17 միլիարդ ռուբլի, համարյա լիովին կկատարեն հնգամյակի վերջին տարվա առաջադրությունները: Սակայն ծանր ինդուստրիայի առանձին ճյուղերի գծով հնգամյա պլանի առաջադրությունների կատարման տոկոսը զգալի կերպով տատանվում ե:

Քարածուխ: Այս տարվա համար տրվում ե 83,5 միլիոն տոննայի առաջադրու-

թյուն, իսկ հնգամյակի համաձայն վերջին տարին պիտի տար 75 միլիոն տոննա: Դա նշանակում ե, վոր 1931 թվին հնգամյակը 11 տոկոսով ավելի յե կատարվելու:

Նավթ — 25,5 միլիոն տոննա, հնգամյակի համաձայն վերջին տարին պիտի տար 21,7 միլիոն տոննա: Այս տարին ուրեմն տալիս ե 18 տոկոսով ավելի, քան հնգամյակի վերջին տարին:

Զուգուցի ձուլում — 8 միլիոն, ըստ հնգամյակի 10 միլիոն տոննա: Այստեղ ունենք 20 տոկոսով պակաս, քան հնգամյակի վերջին տարվա առաջադրությունը: Սակայն յեթե ի նկատի առնենք այն մեծ շինարարությունը, վորն այժմ կատարվում ե սև մետաղագործության բնագավառում, ապա պարզ կլինի, վոր 1932 թիվը հնարավորություն ե տալու արտադրելու 11 միլիոն տոննայից վոչ պակաս: Պարզ ե դառնում, վոր նաև սև մետաղագործության բնագավառում հնգամյակը չորս տարում կատարվելու յե:

Պողպատ: Պողպատը նմանապես քիչ է հնգամյակի առաջադրությունից, ընդամենը 8,8 միլիոն տոննա, թեև հնգամյակը վերջին տարվա համար 10,4 միլ. տոննա յե նախագծել:

Պրոկատ — 6,7 միլիոն տոննա, հնգամյակի վերջին տարին նախագծում է 8 միլիոն տոննա: Սակայն և՛ պողպատի, և՛ պրոկատի գծով հնգամյակի չորրորդ տարին տալու յե հնգամյակի առաջադրության գերակատարում:

Ընդհանուր մեքենաշինարարության գծով մենք զգալի չափով յետ ենք թողնում հնգամյակի վերջին տարին. 2.500 միլիոն ռուբլու արտադրվելու յե 1931 թվին, մինչդեռ հնգամյակը նախագծում էր ընդամենը 2 միլիարդ:

Ցեմենտ — մի քիչ ավելի պակաս, քան հնգամյակի վերջին տարին: Բայց այնուամենայնիվ պարզ է, Վոր հնգամյակը չորս տարում էստարվելու յե. 35 միլիոն տա-

կառ արտադրվելու յե 1931 թվին, էսկ հնգամյակը վերջին տարվա համար նախագծում է 41 միլիոն տակառ:

Միանգամայն պարզ է, Վոր 1932 թվին հնգամյակի թվերից առաջ ենք անցնելու:

Ելեկտրական արդյունաբերության գծով. 1931 թվին արդեն անցնում ենք հնգամյակի թվերից. մի միլիարդի պրոդուկցիա յե արտադրվելու, մինչդեռ հնգամյակը վերջին տարվա համար նախագծում էր 896 միլիոն:

Գյուղատնտեսական մեքենաշինարարության գծով — 756 միլիոն ռուբլու 1931 թվին, մինչդեռ հնգամյակը վերջին տարվա համար նախագծում էր գյուղատնտեսական մեքենաների արտադրություն 610 միլիոն ռուբլու արժողությամբ:

Թեթև արդյունաբերության մի շարք ճյուղերում ունենալու յենք ավելի շատ, քան նախագծված է հնգամյա պլանով:

Թեթև արդյունաբերության զարգացման տեմպերը զգալի կերպով յետ են մնում ծանր արդյունաբերության ճյուղերի զարգացման . տեմպերից: Սակայն և նրանք 1931 թվին տալիս են աճման նշանակալի տեմպեր:

ԺՏԳԽ-ի կողմից պլանավորվող թեթև արդյունաբերության ճյուղերը և մատակարարման ժողկոմատի կողմից պլանավորվող արդյունաբերությունը իրենց պրոդուկցիայի ծավալն ավելացնելու յետ 9.833 միլիոն ռուբլուց 1930 թվին մինչև 12.675 միլիոն ռուբլի 1931 թ., կամ 28,9 տոկոսով:

Թեթև արդյունաբերության ճյուղերին ման զգալի աճումը հանդիսանալու յե, անկասկած, հետևանք այն խոշոր առաջխաղացումների, վերոնք տեղի յեն ունենում սեփական դյուղատնտեսական հումուլթի բազայի զարգացման գործում: Իսկ գյուղատնտեսական հումուլթային բազայի այդ աճումը, ապահովելով գյուղատնտեսական հումուլթի

վերամշակությամբ զբաղվող արդյունաբերության ճյուղերի զարգացման զգալի տեմպերը, կարող եր, իր հերթին, ձեռք բերվել կոլխոզ-սովխոզային շինարարության հաջող ընթացքի բազայի վրա միայն:

Պլանը յենթադրում ե, վոր արդյունաբերական պրոդուկցիայի ինքնարժեքը պետք ե իջնի 10 տոկոսով: Դա վերին աստիճանի դժվարին խնդիր ե, վորը կարող ե լուծվել միայն այն պայմանով, յեթե այս ուղղությամբ մոբիլիզացիայի յենթարկվի ամբողջ պրոլետարական հասարակայնությունը:

Վորակային ցուցանիշները 1931 թվի այս պլանի համար ստանում են առանձնակի նշանակություն: Այս պլանի չկատարման յուրաքանչյուր տոկոսը . նշանակելու յե 150—180 միլիոն ռուբլու կորուստ: Այստանքի արտադրողականությունն աճում ե 28 տոկոսով, վորը նշանակալի չափով պայմանավորվում ե մեր ֆարրիկների և գործարանների տեխնիկական վերազինմամբ,

բանվորների, եներգա-սպառազինման ավել-
լացմամբ և աշխատանքի ավելի լավ կազ-
մակերպմամբ, ռադիոնալիզացիայով, բոլոր
ձեռնարկներում ավելի լավ դիսցիպլինա և
կարգ ու կանոն մտցնելով:

Վերջապես, 1931 թվին շատ լուրջ խն-
դիրներ են դրվում արդյունաբերության
առաջ նաև կապիտալ շինարարության բնա-
գավառում:

ԺՏԳԽ-ի և մատակարարման Ժողկոմատի
կողմից պլանավորվողն արդյունաբերության
կապիտալ աշխատանքների պլանով նախա-
տեսված ծավալը աճում է 3.444 միլիոն ռուբ-
լուց 1930 թվին մինչև 5.923 միլիոն ռուբլի
1931 թվին, կամ 71,9 տոկոսով: Ելեկտրո-
շինարարության աշխատանքների ծավալը
1931 թվի համար վորոշված է 850 միլիոն
ռուբլու: Իսկ յեթե վերցնենք պետական և
կոոպերատիվ արդյունաբերությունը ելեկ-
տրիֆիկացիայի և ելեկտրոշինարարության
հետ միասին, ապա ներդրումը ամբողջ ար-

դյունաբերության մեջ կհասնի 7.465 միլիոն
ռուբլու: ԺՏԳԽ-ի կողմից պլանավորվող ար-
դյունաբերության մեջ, վորը մեզ համար
առանձնապես կարևոր է, քանի վոր այդ
արդյունաբերությունը ստեղծում է գլխա-
վորապես արտադրության միջոցներ, այս
տարի դրվում է 5.500 միլիոն ռուբլի:

Ինչ է նշանակում շինարարության աշ-
խատանքների այս թափը, ինչ են նշանա-
կում կապիտալ շինարարության այս տեմ-
պերը համեմատած նրա հետ, ինչ ունենք
առաջավոր կապիտալիզմի յերկրներում:
1929 թվին ամերիկյան արդյունաբերու-
թյան մեջ դրված է 750 միլիոն դոլլար,
մոտավորապես $1\frac{1}{2}$ միլիարդ ռուբ.: Ինկատի
ունենալով, վոր նրանք ավելի եժան են
կառուցում, այդ $1\frac{1}{2}$ միլիարդը պետք է
ավելացնել յերկու անգամ և մենք կստա-
նանք 3 միլիարդ ռուբլի: Յեւ այնուամե-
նայնիվ 1929 թվին, այսինքն նախքան այն,
յերբ համաշխարհային տնտեսական ճգնա-

ժամը ազդեց արդյունաբերության զրու-
թյան վրա, Ամերիկայի արդյունաբերության
մեջ դրված նոր միջոցները զգալի չափով
ավելի քիչ ելին, քան այն, ինչ մենք ներ-
դնում ենք 1931 թվին:

Բայց վոչ միայն շինարարության ինքը
ծավալն է բնորոշ 1931 թվի համար: Ար-
դյունաբերության բնագավառում բնորոշ է
այն հանգամանքը, վոր 1931 թվին այդ ներ-
դրումները պետք է շահագործման մեջ դնեն
մեծ քանակությամբ ձեռնարկներ: Ամենա-
քիչը 500 նոր ֆաբրիկներ ու գործարան-
ներ պետք է 1931 թվին սկսեն աշխատել և
տալ պրոդուկցիա, ըստ վորում արդյունաբե-
րության հիմնական կապիտալը մի տարվա
ընթացքում ավելանում է 5 միլիարդ
ոտբլով:

Ահա միջոցների այս կենտրոնացումը այն
որյեկտներում, վորոնք ավարտվում են
1931 թվին և այն որյեկտներում, վորոնք
ավարտվում են 1932 թվին, — հանդիսանում

է ամենից ավելի բնութագրականը արդյու-
նաբերության պլանի մեջ:

Ելի մի ընդհանուր շտրիխ, վորն անցնում
է ԺՏԳԽ-ի և Պեսպլանի՝ արդյունաբերա-
կան շինարարության բնագավառում արած
ըտլոր նախագծումների միջով — դա այն է,
վոր ինչ էլ ուզում է լինի, պետք է ապա-
հովել 17 միլիոն տոննա չուգունի հանույթ
1933 թվին: Այն գործարանների համար,
վորոնք յերկրին պետք է տան 17 միլիոն
տոննա չուգուն, բաց են թողնվում հսկայա-
կան միջոցներ և ամեն ինչ արվում է նրա
համար, վորպեսզի չուգունի հետ կապված
կոմպլեքսային պրոբլեմները լուծվեն միա-
ժամանակ — և՛ ածուխի պրոբլեմը, և՛ տրանս-
պորտի պրոբլեմը և այլն և այլն. 17 միլ.
տոննա չուգուն 1933 թվին — ահա այն հիմ-
նական առանցքը, վորը վորոշում է
1931 թվի պլանի վճռական մասերը ար-
դյունաբերական շինարարության բնագա-
վառում:

Պլանի ելի մի ընդհանուր մաս անհրա-
ժեշտ է մատնանշել — դա առաջխաղացումն
է դեպի արևելք, Ուրալ-Կուզնեցկու պրոբ-
լեմի լուծումը, պրոբլեմի, վոր այնպես վառ
կերպով առաջադրեց ընկ. Ստալինը 16-րդ
համագումարում:

1931 թվի կապիտալ աշխատանքների
պլանի համաձայն Ուրալ-Սիբիրյան արդյու-
նաբերության մեջ դրվում է 1.500 միլիոն
ռուբլուց ավելի, այսինքն այնքան, վորքան
դրված էր Խորհրդային Միության վողջ աբ-
դյունաբերության մեջ հնգամյակի առաջին
տարում:

Մեքենաշինարարություն — դա ևս այն-
պիսի մի կողմ է, վորը չի կարելի չմատ-
նանշել, յերբ խոսվում է 1931 թվի կապի-
տալ շինարարության պլանի մասին:

Խոշոր միջոցներ են տրվում Սվերդլովսկի
մեքենաշինարարական գործարանին, Կրա-
մատորսկու մեքենաշինարարական գործա-
րանին և ստանոկներ շինող գործարաններին:

Պլանի համար բնորոշը — յերկրի պաշա-
պանունակության ապահովումն է:

ԵԼԵԿՏՐԻՖԻԿԱՑԻԱ

Ելեկտրիֆիկացիայի գծով 1931 թ. հա-
մար մեծ ծրագիր է նշվում: Ելեկտրոկայան-
ների ուժը 2.885 հազ. կիլովատից հաս-
նելու յե $4\frac{1}{2}$ միլիոն կիլովատի, նույն
թվում շրջանային ելեկտրոկայաններն աճում
են 1.300 հազարից մինչև 2.300 հազար,
տեղականները (ներառյալ և գյուղական-
ները) 485 հազարից մինչև 600 հազար:
Ելեկտրոներգիայի արտադրությունն աճում
է 8,8 միլիարդ կիլովատից մինչև 12,7 մի-
լիարդ կիլովատ, համարյա 4 միլիարդով՝ մի
տարվա ընթացքում: Դա նշանակալի աճում
է համեմատած անցյալ տարվա հետ: Ելեկ-
տրիֆիկացիայի կապիտալ շինարարության
համար բաց է թողնվում 85 միլիոն ռուբլի,
վորը գերազանցում է 1930 թվի բաց թո-
ղածը (388 միլիոն) ավելի քան յերկու-

անգամով։ Սակայն ժողտնտեսության զարգացման տեմպերը և ելեկտրոններգլիայի կարիքն այնքան մեծ են, վոր իհարկե, բաց թողած այդ գումարները դեռ բավական չեն։

Հարկավոր է արագ, նշանակված ժամկետներին կատարել ելեկտրոտեխնարարության այս վիթխարի ծրագրերը, վորը յերկու անգամով ավել է անցյալ տարվա ծրագրից. և դա մեծ նվաճում կլինի ժողտնտեսության համար, վորովհետև 1931 թվին աշխատանքի մեջ կմտնի ավելի քան $1\frac{1}{2}$ միլիոն կիլովատ պատրաստի ուժ։

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության 1931 թվի պլանի ամենաբնութագրական կողմը հանդիսանում է նրա վերակառուցման այն պրոցեսներին հետագա զարգացումը, վոր մենք կարող եյինք արդեն հաստատել, խոսելով հնգամյակի առաջին յերկու տարվա արդյունքների մասին։

Կոլեկտիվացման պրոցեսներն առաջ են գնում ավելի խոշոր տեմպերով։ 1931 թ. նախատեսնվում է գյուղացիական տնտեսությունների կեսից ավելին ընդգրկել կոլխոզներում։ Դա ստեղծելու յե սոցիալատական սեկտորի բացարձակ գերակշիռ գյուղատնտեսության մեջ։ Կոլխոզների ցանքսադաշտերի տարածությունը տարվա վերջում հասնելու յե 71 միլիոն հեկտարի, նույն թվում 51 միլիոն վարնանացան։ Աճում է և սովխոզային սեկտորը։ Սովխոզային սեկտորի ցանքսերի տարածությունը 1931 թ. հասնելու յե 11 միլիոն հեկտարի (յեթե վերցնենք 1931 թվի գաբունը և աշունը)։ Դա ձեռք է բերվում գյուղատնտեսության տեխնիկական վերաշինման հարաճուն ուժեղացմամբ և նոր տարածությունների ընդգրկումով։ Յենթադրվում է 1931 թվին գյուղատնտեսության տալ այնպիսի քանակությամբ տրակտորներ, վորոնց ընդհանուր ուժը հավասար լինի 1.200 ձիու ուժի։ Գյու-

դատնտեսական մեքենաներ տրվելու յեն 730 միլիոն ռուբլու, ըստ վորում այդ մեքենաների ասորտիմենտը (տեսակների ընտրությունը) զգալի կերպով տարբերվելու յե նրանից, ինչ ունեյինք 1930 թ. գյուղատնտեսական կամպանիայի ժամանակ:

Գյուղատնտեսության հանքային պարարտանյութեր յենթագրվում ե տալ 2.420 հազ. տոննա, նույն թվում ազոտային պարարտանյութեր — 153 հազ., կալիյի — 220 հազար և սուպերֆոսֆատային — 1,200 հազար:

Գյուղատնտեսության յերկրորդ ճյուղը — կենդանաբուծությունը: Այստեղ ղրությունը տակավին շարունակում ե մնալ բավական դժվար: Դրված են ծանր առաջադրություններ. «Սկոտովոդի» («Անասնապահի») նախիրները պետք ե հասնեն 2,800 հազ. գլխի. «Սվինովոդին» («Խոզաբուծ») — 1,900, «Ուկրեյնովոդին» («Վոլխարաբուծ») — 4,400: Կաթնա-յուղային տրեստը պետք ե իր նախրի քանակը հասցնի մինչև 110 հազար կովի:

մեծ նախիր պետք ե ստեղծեն Սոյուզստարը և ապառկոտը (ավելի քան 100 հազար կով): Կենդանաբուծության գծով ներգրումները գնում են վոչ միայն անասուններ զնելու գծով, այլև ծախսվում են խոշոր շինարարության համար:

1930 թվին գյուղատնտեսության կապիտալ շինարարության վրա ծախսված ե 2,078 միլիոն ռուբլի: Կապիտալ ծախսումները 1931 թվին հասնում են 3,800 միլիոն ռ., այսինքն համարյա կրկնապատկվում են: Այդ ավելման զգալի մասը տրվում ե գյուղատնտեսության կենդանաբուծական սեկտորին:

ՏՐԱՆՍՊՈՐՏ ՅԵՎ ԿԱՊ

Ժողտնտեսության 1931 թվի պլանում ամենակարևոր տեղերից մեկը բռնում ե տրանսպորտը: Հանդիսանալով ժողտնտեսության ամենից ավելի «նեղ» տեղը, տրանսպորտը պահանջում ե առանձնակի լուրջ ուղղորդություն:

Ամենից առաջ անհրաժեշտ է մատնանշել ծայրահեղ անբավարարությունն այն նախագծերի, վորոնց նշել է հնգամյակը տրանսպորտի համար, նրանց կտրվածությունը ընդհանուր-տնտեսական զարգացման տեմպերից: Այսպես, յեթե մենք հրնգամյակի արդեն յերկրորդ տարում 25 տոկոսով անցանք պլանային այն նախագծերը, վորոնք նշվել էին տրանսպորտի համար, ապա միանգամայն պարզ է, վոր այդ տեմպերը վերցված են յեղել բոլորովին սխալ: 1931 թ. համար նախագծվում է 330 միլիոն տոննա բեռնաշրջանառություն:

Մյուս կողմից, կան վորոշ լիմիտներ, վորոնք հագիվ թե յերկաթգծերին հնարավորություն տան ավելի շատ բեռ տեղափոխելու: Յե՛վ առաջին լիմիտը, վորը պետք է առանձնապես ընդգծվի, հանդիսանում է արդյունաբերության սպասարկումը տրանսպորտի կողմից:

Հարկավոր է հարց դնել այն մասին, վորպեսզի ամենամոտիկ ապագայում ստեղծենք մեր սեփական բազան՝ ավտոկցիշներ, ուժեղ պարավոզներ, ավելի շատ քանակությամբ պարավոզներ և այլն և այլն արտադրելու համար:

Տրանսպորտի մատակարարումը շարժական կազմով ուժեղացնելու հետ մեկտեղ հարկավոր է աշխատել, վոր այն ոգտագործելու վորակային ցուցանիշները ուժեղ կերպով լավանան: 1931 թվի պլանի բարձր առաջադրություններն այս մասում պետք է անպայման իրագործվեն:

1931 թվին տրանսպորտի մեջ անցյալ տարվա 1.800 միլիոն ուղևուր փոխարեն դրվում է 3.185 միլիոն ուղևուր:

Մեր ժողտնտեսության մեջ նեղ տեղ է հանդիսանում նաև ժողովրդական կապը: Ուժեղացրած շինարարությունը այդտեղ վերին աստիճանի անհրաժեշտ է: Այստեղ, սակայն, նորից կա նույն լիմիտը—սրովոգներով

և գունավոր մեծագույներով մատակարարելը։ Այնուամենայնիվ կապիտալ աշխատանքների ծավալը կապի համար սահմանել ենք յերկու անգամ ավելի, քան անցյալ տարի—1930 թ. 130 միլիոն ռուբլու փոխարեն 260 միլիոն ռուբլի։

Կ Ո Ւ Լ Տ Ո Ւ Ր Ա

1931 թվի համար կազմված պլանի մեջ բավական նշանակալի տեղ է բռնում կուլտուրական շինարարությունը։ Լուսժողկոմատի, վտուզների, տեխնիկոմների, ժողառողջապահության, սոցիալական ապահովության—սոցիալ-կուլտուրական այդ բոլոր կարիքների համար բաց թողնված գումարը կազմում է 6,5 միլիարդ ռուբլի՝ ընդդեմ անցյալ տարվա 5 միլիարդ ռուբլու։ Առաջխաղացումը բավական զգալի յե։ 1930 թ. հետ համեմատած կուլտուրական շինարարության համար բաց թողնվելիք գումարը ավելանում է 1.500 միլիոն ռուբլով։

Ինչ էն ապահովում այդ ներդրումները սոցիալ-կուլտուրական շինարարության մեջ։

Այն, վոր ընդհանուր ուսման դպրոցներում սովորողների թիվը 1930 թ. 13,3 միլիոնի փոխարեն հասնելու յե 19,3 միլիոնի։

Այն, վոր ընդունվելու յեն ուսանողներ—վուզերում մինչև 93,4 հազար, տեխնիկոմներում՝ մինչև 194,1 հազար, բանֆակներում՝ 135 հազար։

Այս է համառոտ ընութագրումը նրա, թե ինչ է ապահովվում այն գումարների ավելացումով, վորոնք բաց են թողնվելու սոցիալ-կուլտուրական շինարարության համար։

* * *

Ամբողջ ժողտնտեսության 1931 թվի ներդրումների ընդհանուր գումարը 1930 թվի 10 միլիարդի փոխարեն հասնում է 17 միլիարդի։ Այսպիսով կապիտալ ներդրումների ծավալը աճում է 70 տոկոսով և կազմելու յե 1931 թվին ստացած յերկրի ամբողջ ժող-

յեկամտի համարյա 35%-ը (49 միլիարդ ո.)։ Դա այս (1931) տարվա ամենաբնորոշ գիծն է։ Ժողկեկամտի հսկայական մասը դրվում է կապիտալ շինարարության մեջ։ Համայնացված սեկտորի ֆինանսական ընդհ. պլանը հասնում է 31 միլիարդ ուրբ.։ Այստեղ մտնում են և՛ բյուջետային, և՛ բանկային սիստեմի, և՛ տնտեսական կազմակերպությունների (նույն թվում և կոլխոզների) միջոցները։ Համայնացված սեկտորի յեղբմասը հավասար է 29.600 միլիոն ուրբլու. այսպիսով ստեղծվում է մեկ ու կես միլիարդ ուրբլու ռեզերվ։

Այդ ռեզերվը պետք է լինի կայուն. ինչ ել ուզում է լինի, նա պետք է ստացվի։ Դրա հետ կապակցված, հարկավոր է խոսել ընդհանրապես 1931 թվի պլանի ռեզերվների մասին։ Դրամական ռեզերվ բացարձակապես անհրաժեշտ է։ Անցյալ տարվա փորձը դա ապացուցեց ամենայն պարզությամբ։ Միայն ռեզերվի առկայութունը թույլ կտա լուծել այն լրացուցիչ խնդիրները և հաջո-

ղությամբ հաղթահարել այն դժվարությունները, վորոնք ծագում են պլանի իրականացման պրոցեսում։

Ստեղծվում են և այլ բնույթի ռեզերվներ — արդյունաբերության մեջ. արդյունաբերության գծով կատարվելիք աշխատանքների ծրագիրը նախատեսում է կես միլիարդի հատուկ ռեզերվներ։ Մի խոսքով, այս տարի մենք մեր առաջ խնդիր ենք դնում ստեղծել ավելի զորեղ ռեզերվներ, վորպեսզի հնարավորություն ունենանք ավելի սահուն, առանց առանձնակի վերականգնումների և փոփոխությունների աշխատանքի ընթացքում, իրականացնել մեր նշած պլանը։

Վորոնք են այն պայմանները, վորոնք պետք է նախորդեն վորջ պլանին ընդհանուր առմամբ։ Ամենից առաջ, վորակական ցուցանիշների կատարումը։ Հազիվ թե կարիք կա առանձնապես ապացուցել ինքնարժեքի, աշխատանքի արտադրողականության, պրոդուկցիայի վորակի հարցերի կարևորությունը։ Միայն անհրաժեշտ է կրկին և կրկին ընդգծել, վոր 1931 թվի պլանի համաձայն այդ վորակային ցուցանիշների

գուգորդումը միանգամայն բացառիկ նշանակութիւնը եւ ստանում: Մենք մինչև այժմ պրոլետարական հասարակայնութեան նախաձեռնութիւնը եւ ճիգը արդֆինալանի համար մղվող պայքարում գլխավորապես ուղղել ենք քանակի գծով — տալ աշխինչ քանակութեամբ չուգուն, աշխինչ քանակութեամբ մեքենա: Հազվադեպ եւ այն ել վոչ այնպես վճռական եւ դրվում այն խնդիրը, վոր պետք ե իրականացնել, կենսագործել վորակային ցուցանիշների պլանը: Այստեղ անհրաժեշտ ե արմատական բեկում:

Ժողատնտեսութեան 1931 թվի կոնտրոլ թվերը բանվոր դասակարգի ամենալայն մասսաների եւ կոլխոպնիկների առաջ դնում են այնպիսի խնդիրներ, վորոնց լուծումը պահանջում ե խոշորագույն կազմակերպվածութիւն եւ դիսցիպլինա, աշխատանքի վորակի վճռական լավացում պետական, տնտեսական եւ կոոպերատիվ ապարատների բոլոր ողակներում, պլանային սկզբունքի եւ պլանային դիսցիպլինայի վճռական մոծում տնտեսական զարգացման մեջ ե աշխատավորների ամենալայն մասսաների ակտիվութեան:

Թյան ե աշխատանքային խանգավառութեան հետագա աճում: Այս վերջինը հանդիսանալու յե գլխավոր հիմքը լուծելու համար այն դժվարագույն խնդիրները, վորոնք կանգնած են մեր առաջ արտադրութեան նախագծված ծավալի ե վորակային ցուցանիշների իրականացման բնագավառում:

Հնգամյակի տուաջին յերկու տարվա պլանի կատարումը տեղի յե ունեցել այնպիսի պայմաններում, յերբ մեր յերկրի ներսում շարունակ սրվում եր դասակարգային պայքարը, վորը պայմանավորված ե սոցիալիզմի վճռական հարձակմամբ կապիտալիստական ելեմենտների վրա ե համատարած կոլեկտիվացման հիման վրա կուլակութիւնը վորպես դասակարգ վերացնելով:

1931 թվի պլանի կատարումը անխուսափելիորեն տեղի յե ունենալու այնպիսի պայմաններում, յերբ Խորհրդային Միութեան ներսում գտնվող կապիտալիստական ելեմենտների միացորդները (կուլակները, նապմանները ե ֆասսարաբները) որհասական դիմադրութիւն են ցույց տալու, այնպիսի պայմաններում, յերբ կապիտալիստական աշ-

խարհը տենդային կերպով անդադար պատ-
րաստում է զինված ինտերվենցիայի:

Յեւլ հենց այդ պատճառով ել անհրաժեշտ
է մաքսիմալ չափերով մոբիլիզացիայի յին-
թարկել բանվոր դասակարգի, կոլխոզնիկ-
ների և ամբողջ աշխատավորութեան ստեղծա-
գործող ուժերը, վորպեսզի հաղթահարենք
մեր առաջ կանգնած դժվարութեւոնները,
վորպեսզի ամրապնդենք մեր յերկրի պաշտ-
պանունակութեւնը, վորպեսզի հաջողու-
թյամբ իրականացնենք հնգամյակի վճռական
— յերրորդ տարվա ժողտնտեսական պլանը:

Պայքար հանուն Կուսակցութեան լենին-
յան գլխավոր գծի, պայքար յերկու ֆրոնտի
վրա — ընդդեմ աջ ոպորտունիզմի, վորպես
գլխավոր վտանգի, և ընդդեմ «ձախ» խոտո-
րումների — ահա հիմքն ամբողջ հետագա
պայքարի հանուն մեր յերկրի սոցիալատա-
կան վերակառուցման: 1931 թիվը լինելու
յէ մի խոշորագույն քայլ դեպի առաջ և տալու
յէ նորանոր հաղթանակներ սոցիալիզմի
գործին:



10 407.

16984

Цена 10 коп

О. П. 13.

Арм.
2-3036



В. КУЙБЫШЕВ
План социалист.
наступления 1931 г.

На армянском языке

ЦЕНТРИЗДАТ НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.

ՀՀ Ազգային գրադարան



NL0210494

338.98

4-82